Յետոյ, երբ Վրաստան անկախ յայտարարուեցաւ, վրացի մենշեւիկները խլացրին իրենց ցեղակից ազգայնամոլների տեսակէտը ու զէնքի ուժով եւ օտարների աջակցութեամբ գրաւեցին Ջաւախքը, իրենց այդ վարմունքը «ռազմագիտական եւ պետական «բարձր քաղաքականութեան» նկատումներով արդարացնելով:

Եւ ինչպէս որ վրացի ընկերվարականները նոյնազգի շովէն տարրերի հետքով քայլեցին իրականութեան մէջ, նոյնն արին եւ անում են այսօր էլ վրացի համայնավարները, *քայլելով մենշեւիկների հարթած ճանապարհով — պինդ պահելով իրենց ճանկերում հայկական Ջաւախքը: Վրացի ազգայնամոլների խօսքերը եւ գաղափարները գործ են դարձնում մենշեւիկները, սրանց գործերն էլ ամրապընդում եւ հաստատում են վրացի համայնավարները: Սա փաստ է: Վերջիններս դեռ աւելի առաջ են գնում: Առաջ գոնէ, երբ Անդրկովկասը չէր բաժանուած Ռուսաստանից, մենշեւիկները (Ս.-Փեդերալիստները) Ջաւախքը ճանաչում էին հայկական հողամաս, իսկ այսօր, երբ Անդրկովկասը նորէն ռուսական միութեան մէջ է գտնւում, վրացի համայնավարները զլանում են ճանաչել մեր իրաւունքը:*

Հապա Ջաւախքի հայութի՞ւնը: Հապա հայ համայնավարնե՞րը:

Ինչպէս ցարերի, ինչպէս մենշեւիկների օրով, այնպէս եւ այժմ, բոլշեւիկների օրով, Ջաւախքի հայութիւնը *երբեք էլ առիթը չէ կորցրել յայտարարելու՝ Հայաստանին միանալու իր անխախտ կամքը, ինչպէս նաեւ իր բողոքը, որ զինքը բռնութեամբ պահում են Վրաստանի մէջ: Եւ այդ արել է նա՝ հակառակ դրանից բխող ծանր հետեւանքներին իր համար, առաջնորդուելով ազգային եւ մարդկային աւելի բարձր սկզբունքներով: Նա իր կաշուի վրայ զգացել է եւ զգում է, թէ ի՛նչ է նշանակում* օտարի իշխանութիւն, *թէ ի՛նչ է նշանակում՝ անջատուած պահուիլ մայր հայրենիքի օրգանիզմից:*

Ընդամէնը երեք տարի առաջ էր, որ Ախալքալաքի հայութիւնը Թիֆլիս ու Երեւան ղրկած իր պատգամաւորների *միջոցով նորից մի անգամ ներկայացրեց իր միահամուռ պահանջը — միանալ Հայաստանին: Եւ սակայն բոլշեւիկները ոչ միայն չարին այդ, ոչ միայն գոնէ* ներքին ինքնավարութիւն *չտուին Ջաւախքին, այլ աւելի եւս ծանրացրին նրա դըրութիւնը, վրացի պաշտօնեաների եւ կուսակցականների գերազանց քմահաճոյքին մատնելով նրան:*

Այդ ժամանակ «Կովկասի փոխարքան» էր վրացի Օրժօնիկիձէն, *որին «Մոսկուայի աչքը» մականունն էին տուել: Նա, որ այժմ այնտեղ նստած՝ երկրորդ դիկտատորն է Ռուսաստանի, դարձեալ Վրացի Ստալին-Ջուղաշվիլիից յետոյ (երրորդ դիկտատորը՝ նորէն վրացի, Ենուկիձէ):*

Ի՞նչ արաւ Օրժօնիկիձէն: Իրագործե՞ց Ջաւախքի հայութեան ազգային ինքնորոշման արդար պահանջը:

Ի հարկէ ո՛չ: Ի՞նչ արաւ հապա: Սաստելով ու սպառնալիքներով նա տուն ճամբեց ջաւախցիներին, քիչ անց էլ կարգադրելով, որ «ըմբոստների» ղեկավարներին ձերբակալեն եւ աքսորեն: Է՞լ ինչ արաւ «Մոսկուայի աչքը»: Նա մի զեկոյց ղրկեց Խորհրդային մայրաքաղաք (տե՛ս «Պրաւդա», 1926 թ. Մայիս 12), գրելով մէջը. «Ախալքալաքի 37 գիւղեր (ուզում է ասել՝ ոչ ամբողջ գաւառը) ցանկութիւն (արդեօ՞ք միայն «ցանկութիւն») են յայտնել՝ միանալ Հայաստանին»:

Այնուհետեւ այսպէս է հիմնաւորում նա, որպէս մարքսիստ, իր զեկոյցը. թէ՝ ըմբոստութեան պատճառը այն է եղել, որ ախալքալաքցի հային զրկել են բաւարար հողաբաժնից, նրա ցանքերը ոտի տակ են տուել ու փճացըրել վրացի քոչուոր-խաշնարածները: *Միայն թէ, «եզրակացնում» է Օրժօնիկիձէ, այդ ամէնի պատճառը ոչ այլ ինչ եղել, թէ ոչ ... Վրաստանի երկրագործական «գործավարութեան մեքենան». թէ՝ այդ վերջինը չտկուել է յետոյ, թէ՝ նոյնը պատահել է նաեւ (ի՛նչ չքմեղացում) Գանձակի շրջանում, ուր «հայերին խոստացել էին հող, բայց չէին տուել»: Իսկ որ գլխաւորն է. «Գայթակղելի է միանգամայն, որ Խորհրդային հանրապետութեան քաղաքացիները ուզում են հեռանալ նրանից (այսինքն՝ Վրաստանից) միայն այն պատճա-*